# ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/59>>

«24» մայիսի 2021 թ.

ք. Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՄԱՆՎԵԼՅԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Մանվելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և համաձայնեցված ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի դրույթներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության
ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին
նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև
հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին
հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ
հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ
Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը
Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ
էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման
ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային
գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4):
Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում,
հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն
սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է
www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների
նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին,
Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան
հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում
ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին
է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և
դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում
պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման
արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային
գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում
հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք
հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում
Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված
միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված
պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի
ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված
աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված
վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային
գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից
ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված
առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները
նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը
կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար
պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները:
Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ
վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունել իս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝
1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն
ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի
Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ
սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու
համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ
ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության
կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով
ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված
աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի
Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման
համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության
օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց
հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական

օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը`

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրելը` Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում` վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **4318800 (չորս միլիոն երեք հարյուր տասնութ հազար ութ հարյուր)** ՀՀ դրամ, որից **719800(յոթ հարյուր տասնինը հազար ութ հարյուր)** ՀՀ դրամը` ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված` առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների` պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ` դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ` կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք` պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը միակողմանի չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների և դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ ........................................................................

........................................................................

համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, սույն կետով սահմանված կարգով համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000060
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան --------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կապալառու**
<<ՄԱՆՎԵԼՅԱՆՇԻՆ>> ՍՊԸ
ք.Հրազդան, Երևանյան փողոց
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ
Հ/Հ 220343333641000
ՀՎՀՀ 03025212

Տ. Մանվելյան --------------------
(ստորագրություն)

Հավելված թիվ 1
«24 »մայիսի 2021 թ. կնքված
աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱԾՁԲ-21/59>> գնման պայմանագրի

# Ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի վարչական շենքի վերանորոգում

Ծավալաթերթ-Նախահաշիվ

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը /ՀՀ դրամ/ | Ընդամենը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | Շինարարական աշխատանքներ | | | | |
| | ՄԱՍ-1 | | | | |
| | Քանդման աշխատանքներ | | | | |
| 1 | Պատի յուղաներկի քերում | մ² | 43.000 | 200.000 | 8600.00 |
| 2 | Պատի ներկի քերում | մ² | 57.000 | 200.000 | 11400.00 |
| 3 | Պատի սոսնձաներկի | մ² | 100.000 | 150.000 | 15000.00 |
| 4 | Պատի գաջի սվաղի քերում /30%/ | մ² | 30.000 | 300.000 | 9000.00 |
| 5 | Առաստաղի ներկի քերում | մ² | 100.000 | 150.000 | 15000.00 |
| 6 | Առաստաղի սոսնձաներկի | մ² | 100.000 | 200.000 | 20000.00 |
| 7 | Առաստաղի գաջի սվաղի քերում /30%/ | մ² | 30.000 | 300.000 | 9000.00 |
| 8 | Շեպերի գաջե սվաղի քանդում | մ² | 13.50 | 300.000 | 4050.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | Լուսատուների ապամոնտաժում | հատ | 8.000 | 500.000 | 4000.00 |
| 10 | Ապակե միջնորմնեի քանդում | մ² | 18.000 | 500.000 | 9000.00 |
| 11 | Փայտե շրիշակների քանդում | գմ | 35.000 | 50.000 | 1750.00 |
| 12 | Պրեսգրանիտե շրիշակների ապամոնտաժում 8գմ | մ² | 0.800 | 1000.000 | 800.00 |
| 13 | Պատի քանդում | մ³ | 2.500 | 2000.000 | 5000.00 |
| 14 | Դռների ապամոնտաժում 6հատ | մ² | 11.340 | 200.000 | 2268.00 |
| 15 | Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում | 1մարտ | 1.000 | 500.000 | 500.00 |
| 16 | Անջատիչների ապամոնտաժում | հատ | 4.000 | 200.000 | 800.00 |
| 17 | Վարդակների ապամոնտաժում | հատ | 3.000 | 200.000 | 600.00 |
| 18 | Հոսանքի բաշխիչ տուփի հանում | հատ | 1.000 | 300.000 | 300.00 |
| 19 | Շին աղբի  բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ | տն | 5.805 | 2200.000 | 12771.00 |
| | **Վերանորոգման աշխատանքներ** | | | | |
| 20 | Պատերի լավորակ գաջե սվաղ /30%/ | մ² | 35.000 | 1700.000 | 59500.00 |
| 21 | Առաստաղի լավորակ գաջե սվաղ /30%/ | մ² | 30.000 | 1700.000 | 51000.00 |
| 22 | Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | մ² | 120.000 | 1300.000 | 156000.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 23 | Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | մ² | 100.000 | 1300.000 | 130000.00 |
| 24 | Պատերի երեսպատում 30մմ հաստությամբ տուֆե սալերով սալերի խարսխումով | մ² | 0.500 | 10000.000 | 5000.00 |
| 25 | Տուֆե պատերի հղկում | մ² | 25.000 | 1000.000 | 25000.00 |
| 26 | Ակոսների փորում էլեկտրահաղորդալարերի անցկացման համար մինչև | գմ | 250.000 | 50.000 | 12500.00 |
| 27 | ППВГ 2x2,5մմ հաղորդալարի անցկացում | գմ | 400.000 | 250.000 | 100000.00 |
| 28 | ВВГ 2-2,5մմ մալուխների անցկացում | գմ | 150.000 | 250.000 | 37500.00 |
| 29 | Հեռախոսալարերի անցկացում | գմ | 200.000 | 150.000 | 30000.00 |
| 30 | Խողովակապաշտպանիչ տուփիկ | գմ | 30.000 | 300.000 | 9000.00 |
| 31 | Լուսատուների տեղադրում | հատ | 9.000 | 5000.000 | 45000.00 |
| 32 | Պրեսգրանիտե րիշակների տեղադրում 70գմ | մ² | 7.000 | 8000.000 | 56000.00 |
| 33 | ՄԴՖ-ից ներքին դռների տեղադրում 0,8x2,1մ 2հատ | մ² | 3.360 | 26800.000 | 90048.00 |
| 34 | ՄԴՖ-ից ներքին դռների տեղադրում 0,9x2,1մ 4հատ | մ² | 7.560 | 30000.000 | 226800.00 |
| 35 | Աստիճանների մետաղական փոշեներկված բազրիքների տեղադրում | գմ | 5.000 | 10000.000 | 50000.00 |
| 36 | 20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնացմամբ և ամրանավորումով | մ³ | 5.000 | 27000.000 | 135000.00 |
| 37 | Շարվածքի ամրանավորում Ac-1 | տն | 0.042 | 400000.000 | 16800.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 38 | Շեպությունների գաջե սվաղ | մ² | 12.000 | 3000.000 | 36000.00 |
| 39 | Նույնի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | մ² | 12.000 | 1300.000 | 15600.00 |
| 40 | Անջատիչների տեղադրում | հատ | 4.000 | 1500.000 | 6000.00 |
| 41 | Վարդակների տեղադրում | հատ | 8.000 | 1500.000 | 12000.00 |
| | ՄԱՍ-2 | | | | |
| | Քանդման աշխատանքներ | | | | |
| 42 | Պատի ներկի քերում | մ² | 115.000 | 50.000 | 5750.00 |
| 43 | Պատի սոսնձաներկի | մ² | 115.000 | 50.000 | 5750.00 |
| 44 | Պատի գաջի սվաղի քերում /30%/ | մ² | 35.000 | 100.000 | 3500.00 |
| 45 | Առաստաղի ներկի քերում | մ² | 75.000 | 100.000 | 7500.00 |
| 46 | Առաստաղի սոսնձաներկի քերում | մ² | 75.000 | 100.000 | 7500.00 |
| 47 | Առաստաղի գաջի սվաղի քերում /30%/ | մ² | 22.000 | 200.000 | 4400.00 |
| 48 | Շեպերի գաջե սվաղի քանդում | մ² | 1.50 | 200.000 | 300.00 |
| 49 | Հաղորդալարի ապամոնտաժում | գմ | 150.000 | 20.000 | 3000.00 |
| 50 | Լուսատուների ապամոնտաժում | հատ | 6.000 | 200.000 | 1200.00 |
| 51 | Փայտե շրիշակների քանդում | գմ | 55.000 | 30.000 | 1650.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 52 | Պատի քանդում | մ$^3$ | 2.000 | 2500.000 | 5000.00 |
| 53 | Դռների ապամոնտաժում 1հատ | մ$^2$ | 1.890 | 300.000 | 567.00 |
| 54 | Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում | 1մարտ | 4.000 | 500.000 | 2000.00 |
| 55 | Անջատիչների ապամոնտաժում | հատ | 15.000 | 100.000 | 1500.00 |
| 56 | Վարդակների ապամոնտաժում | հատ | 4.000 | 100.000 | 400.00 |
| 57 | Տախտակե հատակի քանդում | մ$^2$ | 75.000 | 400.000 | 30000.00 |
| 58 | Փայտե պատերի քանդում 7մ3 | մ$^2$ | 70.000 | 400.000 | 28000.00 |
| 59 | Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ | տն | 7.981 | 3000.000 | 23943.00 |
| | **Վերանորոգման աշխատանքներ** | | | | |
| 60 | Պատերի լավորակ գաջե սվաղ | մ$^2$ | 110.000 | 1700.000 | 187000.00 |
| 61 | Առաստաղի լավորակ գաջե սվաղ /30%/ | մ$^2$ | 23.000 | 1800.000 | 41400.00 |
| 62 | Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | մ$^2$ | 140.000 | 1300.000 | 182000.00 |
| 63 | Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | մ$^2$ | 75.000 | 1400.000 | 105000.00 |
| 64 | Լամինատե հատակի պատրաստում շրիշակով և սպունգով | մ$^2$ | 75.000 | 5200.000 | 390000.00 |
| 65 | Առաստաղի երեսպատում 12,5մմ հաստությամբ գիպսոկարտոնից | մ$^2$ | 2.000 | 4000.000 | 8000.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 66 | 30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ | մ$^2$ | 2.000 | 2000.000 | 4000.00 |
| 67 | Կերամիկ սալերից հատակի պատրաստում | մ$^2$ | 2.000 | 8000.000 | 16000.00 |
| 68 | Պատերի լավորակ ց/ավազե սվաղ | մ$^2$ | 16.000 | 1800.000 | 28800.00 |
| 69 | Պատերի երեսպատում հախճասալով | մ$^2$ | 1.000 | 8000.000 | 8000.00 |
| 70 | Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Փ100մմ /փորձարկումով/ | գմ | 6.000 | 1500.000 | 9000.00 |
| 71 | Պոլիվինիլքլորիդե ձևավոր մասեր | հատ | 4.000 | 1200.000 | 4800.00 |
| 72 | Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Փ20մմ,լվացումով, քլորացումով ,փորձարկումով | գմ | 6.000 | 800.000 | 4800.00 |
| 73 | Զուգարանակոնքի տեղադրում | հատ | 1.000 | 33000.000 | 33000.00 |
| 74 | Լվացարանի տեղադրում | հատ | 1.000 | 25000.000 | 25000.00 |
| 75 | Լվացարանի ծորակի տեղադրում | հատ | 1.000 | 4000.000 | 4000.00 |
| 76 | Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից | մ$^2$ բացված | 22.000 | 400.000 | 8800.00 |
| 77 | Պատուհանագոգի արժեքը 40սմ լայնությամբ | գմ | 10.000 | 3500.000 | 35000.00 |
| 78 | Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում | տն | 0.375 | 50000.000 | 18750.00 |
| 79 | Ջեռուցման մարտկոցների վերատեղադրում | հատ | 4.000 | 1000.000 | 4000.00 |
| 80 | Ակոսների փորում էլեկտրահաղորդալարերի անցկացման համար մինչև | գմ | 200.000 | 50.000 | 10000.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 81 | ППВГ 2x2,5մմ հաղորդալարի անցկացում | գմ | 100.000 | 300.000 | 30000.00 |
| 82 | ВВГ 2-2,5մմ մալուխների անցկացում | գմ | 100.000 | 300.000 | 30000.00 |
| 83 | Ավտոմատ անջատիչների արկղի տեղադրում | հատ | 1.000 | 4000.000 | 4000.00 |
| 84 | Խողովակապաշտպանիչ տուփիկ | գմ | 50.000 | 500.000 | 25000.00 |
| 85 | Լուսատուների տեղադրում | հատ | 12.000 | 5000.000 | 60000.00 |
| 86 | Պրեսգրանիտե բիշակների տեղադրում 55գմ | մ$^2$ | 5.500 | 8000.000 | 44000.00 |
| 87 | ՄԴՖ-ից ներքին դռների տեղադրում 0,8x2,1մ 2հատ | մ$^2$ | 3.360 | 35000.000 | 117600.00 |
| 88 | ՄԴՖ-ից ներքին դռների տեղադրում 0,9x2,1մ 4հատ | մ$^2$ | 1.890 | 35000.000 | 66150.00 |
| 89 | Փայտե ներքին դռների տեղադրում 160x210մմ 1հատ /երկփեղկ/ | մ$^2$ | 3.360 | 60000.000 | 201600.00 |
| 90 | 10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ | մ$^2$ | 50.000 | 4000.000 | 200000.00 |
| 91 | Շարվածքի ամրանավորում Ac-1 | տն | 0.145 | 300000.000 | 43500.00 |
| 92 | Շեպությունների գաջե սվաղ | մ$^2$ | 7.000 | 3000.000 | 21000.00 |
| 93 | Նույնի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | մ$^2$ | 7.000 | 1300.000 | 9100.00 |
| 94 | Անջատիչների տեղադրում | հատ | 5.000 | 1500.000 | 7500.00 |
| 95 | Վարդակների տեղադրում | հատ | 15.000 | 1500.000 | 22500.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 96 | Տեղեկատվական վահանակի պատրաստում և տեղադրում | կ-տ | 1.000 | 23153.000 | 23153.00 |
| | Ընդամենը | | | | 3599000.00 |
| | ԱԱՀ | 20% | | | 719800.00 |
| | Ընդամենը | | | | 4 318 800 |

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1.Իրականացնել նախագծա-նախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքերն ըստ շինարարական նորմերի և կանոնների:

2. Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթեր (տեխնիկական անձնագրեր և այլ) և դրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին:

3. Սահմանված կարգով կազմել ծածկված աշխատանքների ակտերը, շահագործման անհրաժեշտ կազմակերպությունների մասնակցությամբ կատարել բոլոր փորձարկումները՝ կազմելով դրանց ակտերը:

4. Կապալառուն պարտավոր է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում նախագծային կազմակերպության կողմից կազմված նախահաշվում ներառված գնի սահմաններում Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացնել օբյեկտում օգտագործվելիք նյութերի նմուշները, ներկայացնելով նաև դրանց գինը հիմնավորող փաստաթղթերը և սերտիֆիկատները:

Վերոգրյալ ժամկետի կամ պայմանի խախտման դեպքում նույն նախահաշվային գնի սահմաններում Կապալառուն պարտավոր է ձեռք բերել վերոգրյալ նյութերը Պատվիրատուի ընտրությամբ:

5. Կապալառուն պարտավոր է մեկամսյա ժամկետում ուսումնասիրել նախագծային փաստաթղթերը և թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին գրավոր հայտնել Պատվիրատուին:

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000060
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ________________

Կ.Տ.

**Կապալառու**
<<ՄԱՆՎԵԼՅԱՆՇԻՆ>> ՍՊԸ
ք.Հրազդան, Երևանյան փողոց
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ
Հ/Հ 220343333641000
ՀՎՀՀ 03025212

Տ. Մանվելյան ________________

Հավելված թիվ 2
«24» մայիսի 2021 թ. կնքված
աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/59>> գնման պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի վարչական շենքի վերանորոգման **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ | Պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից | 120 օրացուցային օր |
| 2 | | | |
| ... | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000060
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

**Կապալառու**
<<ՄԱՆՎԵԼՅԱՆՇԻՆ>> ՍՊԸ
ք.Հրազդան, Երևանյան փողոց
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ
Հ/Հ 220343333641000
ՀՎՀՀ 03025212

Տ. Մանվելյան ____________
(ստորագրություն)

Հավելված N 3
«24 »մայիսի 2021 թ. կնքված
աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/59>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 45461100/5 | Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ | | -- | --- | --- | 1 386 680 | 1 386 680 | 4 318 800 | 4 318 800 | 4 318 800 | 4 318 800 | 4 318 800 | 4 318 800 | 4 318 800 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000060
ՀՎՀՀ 02593108

Ե. Կիրակոսյան ------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կապալառու**
<<ՄԱՆՎԵԼ ՅԱՆՇԻՆ>> ՍՊԸ
Ք.Հրազդան, Երևանյան փողոց
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ
Հ/Հ 220343333641000
ՀՎՀՀ 03025212

Տ. Մանվելյան ------------------
(ստորագրություն)

Հավելված թիվ 4
«24» մայիսի 2021 թ. կնքված
աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/59>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

_______________________________

_______________________________

գտնվելու վայրը ____________ —

հհ ____________________

հվհհ ____________________

Պատվիրատու

_______________________________

_______________________________

գտնվելու վայրը ____________

հհ ____________________

հվհհ ____________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «____________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ____________ հիմք ընդունելով պայմանագրի
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի
կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ
ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ
աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը: ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | քանակական ցուցանիշը: փաստացի | կատարման ժամկետը: ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | կատարման ժամկետը: փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_______________________________
ստորագրություն

_______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_______________________________
ստորագրություն

_______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 4.1*
*«24 »մայիսի 2021 թ. կնքված*
*աշխատանքների կատարման*
*թիվ << ԵՔ-ԲՄԱԾՁԲ-21/59>> գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և __________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ____________________________-ին կնքված N __________ ______
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/59
### (որակավորման ապահովում)

«24» մայիսի 2021թ.**

ք. Երևան

<<ՄԱՆՎԵԼ ՅԱՆՇԻՆ>> ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Տիգրան Մանվելյան Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Ն/p012746806 որը գործում է Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի __* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից

պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/59 * ծածկագրով գնման ընթացակարգին:

ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետականչելի որեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետականչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝ կապը առու

<u><<ՄԱՆՎԵԼՅԱՆՇԻՆ>> ՍՊԸ</u>

ընկերության անվանումը

<u>Ք.Հրազդան,Երևանյան 29շ35բն</u>

ընկերության հասցեն

<u>ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ</u>

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

<u>220343333641000</u>

ընկերության բանկային հաշվեհամարը

<u>03025212</u>

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Տ. Մանվելյան ____________

(ստորագրություն)

# ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

1.

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___ թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն `<<ՄԱՆՎԵԼՅԱՆՇԻՆ>> ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ

6. Վճարողի հաշվի համարը `220343333641000

7. Վճարողի ՀՎՀՀ `03025212

8. Վճարողի ՀԾՀ`

9. Ստացողի անվանումը, կամ անուն ազգանուն ` Երևանի քաղաքապետարան

10. Ստացողի ՀԾՀ (չի լրացվում)

11. Ստացողի ՀՎՀՀ ` 02593108

12. Ստացողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13. Ստացողի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14. Գումարը (թվերով և բառերով)՝ 647820/վեց հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր քսան/

15. Ակցեպտավորված գումարը` (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17. Գործարքի (վճարման) նպատակը` *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը` (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում` տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)`

19. Վճարման պայմանները` <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը` --- էջ

21.ա. Վճարողի ստորագրությունները`

Տ. Մանվելյան /______________/

/______________/

«ՄԱՆՎԵԼՅԱՆՇԻՆ» "МАНВЕЛЯНШИН" "MANVELYANSHIN" 03025212

21.բ. Կ.Տ.

22.ա. Ստացողի ստորագրությունները

/______________/

/______________/

22.բ. Կ.Տ.

23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/______________/

/ստորագրություն/

23.բ. Կ.Տ.

23.գ. Կատարման ամսաթիվը` "___" ___ 20___ թ.

24.ա. Ստացողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/______________/

/ստորագրություն/

24.բ. Կ.Տ.

24.գ "___" ___ 20___ թ.

## **ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ** ԵՔ-ԲՄԱԾՁԲ-21/59
**(պայմանագրի ապահովում)**

«<u>24</u> » <u>մայիսի</u> 2021թ.**

ք. Երևան

**<u><<ՄԱՆՎԵԼՅԱՆՇԻՆ>> ՍՊԸ</u>**, ի դեմս Ընկերության տնօրեն **<u>Տիգրան Մանվելյան</u>** (այսուհետև՝ <u>Ն/թ012746806</u> որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի__* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ ԵՔ-ԲՄԱԾՁԲ-21/59__* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետկանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2.Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

**Կապալառու**

<<ՄԱՆՎԵԼՅԱՆՇԻՆ>> ՍՊԸ

ընկերության անվանումը

Ք.Հրազդան,Երևանյան 29շ35բն

ընկերության հասցեն

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

220343333641000

ընկերության բանկային հաշվեհամարը

03025212

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Տ. Մանվելյան ------------------------

(ստորագրություն)

# ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

1.

2. Թիվ

Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___ թ.

3.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն `<u><<ՄԱՆՎԵԼՅԱՆՇԻՆ>> ՍՊԸ</u>

5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)` <u>ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ</u>

6. Վճարողի հաշվի համարը`<u>220343333641000</u>

7. Վճարողի ՀՎՀՀ`<u>03025212</u>

8. Վճարողի ՀԾՀ`

9. Ծահառուի անվանումը, կամ անուն ազգանուն` Երևանի քաղաքապետարան

10. Ծահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Ծահառուի ՀՎՀՀ` 02593108

12. Ծահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)` Կենտրոնական գանձապետարան

13. Ծահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14. Գումարը (թվերով և բառերով)` 431880 /չորս հարյուր երեսունմեկ հազար ութ հարյուր ութսուն/

15. Ակցեպտավորված գումարը` (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16. Արժույթը (բառերով և կոդով)` ՀՀ դրամ AMD

17. Գործարքի (վճարման) նպատակը` *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը` (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում` տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)` <ակցեպտավորված վճարում>

19. Վճարման պայմանները`

20. Առդիր էջերի քանակը` --- էջ

21.ա. Վճարողի ստորագրությունները`

Տ. Մանվելյան /____________/

/____________/

21.բ.

Կ.Տ.

22.ա. Ծահառուի ստորագրությունները

/____________/

/____________/

22.բ.

Կ.Տ.

23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/____________/

/ստորագրություն/

Կ.Տ.

23.բ.

23.գ. Կատարման ամսաթիվը` "___" ___ 20___ թ.

24.ա. Ծահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/____________/

/ստորագրություն/

Կ.Տ.

24.բ.

24.գ. "___" ___ 20___ թ.